# ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1-01/272

*«ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար համակարգչային տեխնիկայի և պատճենահանման սարքավորումների մատակարարման*
*21.11.2025թ. կնքված № ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-120/25-01/272 ծածկագրով պայմանագրի*

ք. Մեծամոր ___.դեկտեմբերի.2025թ.

**Գնորդը՝** ի դեմս «ՀԱԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրենի տեղակալ – ընդհանուր հարցերի գծով տնօրեն Սամսոն Մաթևոսյանի և

**Վաճառողը՝** ի դեմս «Կոմիտաս Սիմոնյան Սրապիոնի» ԱՁ-ի

կնքեցին սույն Լրացուցիչ համաձայնագիրը հետևյալի մասին.

Առաջնորդվելով ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-120/25 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում e-auction համակարգում ներկայացված գնային առաջարկով, «Կոմիտաս Սիմոնյան Սրապիոնի» ԱՁ հարկման ռեժիմից և Կողմերի միջև 21.11.2025թ. կնքված № ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-120/25-01/272 Պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 կետով, կնքեցին սույն լրացուցիչ համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

**Կողմերը** որոշեցին՝

1. Պայմանագրի 3.1 կետը «Պայմանագրի գինը կազմում է 5 308 560 (հինգ միլիոն երեք հարյուր ութ հազար հինգ հարյուր վաթսուն) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը», շարադրել հետևյալ խմբագրությամբ «Պայմանագրի գինը կազմում է 4 423 800 (չորս միլիոն չորս հարյուր քսաներեք հազար ութ հարյուր) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը»:
2. Պայմանագրի անբաժան մաս կազմող հավելված 1-ում 2-րդ չափաբաժնի միավորի գինը դաշտում նշված «429 940 ՀՀ դրամ» շարադրել հետևյալ խմբագրությամբ «358 283,33 ՀՀ դրամ»:
3. Պայմանագրի անբաժան մաս կազմող հավելված 1-ում 4-րդ չափաբաժնի միավորի գինը դաշտում նշված «74 640 ՀՀ դրամ» շարադրել հետևյալ խմբագրությամբ «62 200 ՀՀ դրամ»:
4. Պայմանագրի անբաժան մաս կազմող հավելված 1-ում 2-րդ չափաբաժնի ընդհանուր գինը դաշտում նշված «5 159 280 ՀՀ դրամ» շարադրել հետևյալ խմբագրությամբ «4 299 400 ՀՀ դրամ»:
5. Պայմանագրի անբաժան մաս կազմող հավելված 1-ում 4-րդ չափաբաժնի ընդհանուր գինը դաշտում նշված «149 280 ՀՀ դրամ» շարադրել հետևյալ խմբագրությամբ «124 400 ՀՀ դրամ»:
6. Պայմանագրի անբաժան մաս կազմող հավելված 2-ում 2-րդ չափաբաժնի «Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների» նշված բոլոր դաշտերում՝ ներառյալ ընդամենը դաշտը «5 159 280 ՀՀ դրամ» փոխարինել «4 299 400 ՀՀ դրամ»-ով:
7. Պայմանագրի անբաժան մաս կազմող հավելված 2-ում 4-րդ չափաբաժնի «Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների» նշված բոլոր դաշտերում՝ ներառյալ ընդամենը դաշտը «149 280 ՀՀ դրամ» փոխարինել «124 400 ՀՀ դրամ»-ով:
8. Պայմանագրի մյուս դրույթները թողնել անփոփոխ:
9. Սույն Լրացուցիչ համաձայնագիրը հանդիսանում է 21.11.2025թ. կնքված № ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-120/25-01/272 Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև պայմանագրի ամբողջ ծավալով կատարումը:

10. Սույն Լրացուցիչ համաձայնագիրը կնքված է երկու հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող օրինակից՝ յուրաքանչյուր Կողմին մեկական օրինակ:

**ԳՆՈՐԴ**
**«ՀԱԷԿ» ՓԲԸ**

MATEVOSYAN SAMSON 3309720055

Digitally signed by MATEVOSYAN SAMSON 3309720055
DN: c=AM, sn=••••••••••,
givenName=••••••,
serialNumber=1c32218e89d6,
cn=MATEVOSYAN SAMSON 3309720055
Date: 2025.12.03 12:05:38 +04'00'

…………………………………… **Ս. Մաթևոսյան**

Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
**«Կոմիտաս Սիմոնյան Սրապիոնի» ԱՁ**

Ստորագրող
ԿԱՐԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ
1612870627

2025-12-02 09:39:32 GMT+04:00
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

…………………………………… **Կ. Սիմոնյան**

Կ.Տ